

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12 մարտի 2009 թվականի

Նախագահում էր՝

Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն,
գործարարության աջակցման խորհրդի քարտուղար

Մասնակցում էին՝

- Է. Գրիգորյան - «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
- Ց. Գևորգյան - «Հայաստանի վաճառականներ» ՀԿ-ի նախագահ
- Դ. Աթանեսյան - «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» ԻԱՄ-ի նախագահ
- Կ. Անդրեասյան - «Ֆրստ Թրավլ Ընդ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
- Ն. Նահապետյան - «Ակադեմիկոս Ա.Լ. Մնջոյանի անվ. Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի
գլխավոր տնօրեն
- Վ. Աֆյան - «Սոլարէն» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Հովեյան - «Արպեզ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- Ս. Մովսիսյան - «Մովսիսյան» բնական քարերի մշակման ձեռնարկություն ՍՊԸ-ի գործադիր
տնօրեն
- Լ. Շամյան - «Հերմես-Արտ» ՍՊԸ-ի տնօրեն
- Ս. Սարգսյան - «Հայաստանի Բանկերի Միություն» ԻԱՄ-ի տնօրեն
- Ա. Ավետիսյան - «Բիո-քիմ» ՍՊԸ-ի տնօրեն
- Գ. Մինասյան - «Հայաստանի շինարարների միություն» ԻԱՄ-ի տնօրեն
- Ռ. Բեկիրսկա - «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի նախագահ
- Փ. Մնացականյան - «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի կադրեր բաժնի պետ
- Տ. Զրբաշյան - «Ամերիա բանկ» ՓԲԸ-ի զարգացման գծով տնօրեն
- Ա. Հայրապետյան - Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի փոխտնօրեն
- Կ. Սարգսյան - «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի փոխտնօրեն
- Ռ. Թադևոսյան - «Մուլտի-Ագրո»-արտադրական կենտրոն ՍՊԸ-ի փոխտնօրեն
- Ա. Մելիք-Ադամյան - «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի անձնակազմի կառավարման բաժնի ղեկավար
- Ս. Ենգիբարյան - «Լիկվոր» դեղագործական ընկերություն» ՓԲԸ-ի մարդկային ռեսուրսների
մենեջեր
- Ս. Խալաթյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների)
միություն» ՀԿ-ի խորհրդական

- Ս. Մարտիրոսյան - «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի կադրերի բաժնի ղեկավար
- Լ. Հարությունյան - Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցության գրասենյակի ավագ խորհրդատու
- Ժ. Արամյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ
- Հ. Ասլանյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր իրավաբան
- Մ. Մելիքյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի հասարակայնության հետ կապերի մասնագետ
- Հ. Տորտիկյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Օ. Հայրապետյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ոլորտում՝ աշխատանքային օրենսգիրքը և այդ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը պրակտիկայում կիրառելու արդյունքում բիզնեսի զարգացման վրա ազդող խոչընդոտների բացահայտում և քննարկում:

2. Գործարար միջավայրի այլ ոլորտներում ստեղծված իրավիճակում հրատապ լուծում պահանջվող խնդիրների բացահայտում և քննարկում:

1. Աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ոլորտում՝ աշխատանքային օրենսգիրքը և այդ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը պրակտիկայում կիրառելու արդյունքում բիզնեսի զարգացման վրա ազդող խոչընդոտների բացահայտում և քննարկում:

(Ռ. Հարությունյան, Ժ. Արամյան, Ն. Նահապետյան, Յ. Գևորգյան, Ռ. Բեկիրսկա, Տ. Ջրբաշյան, Ա. Ավետիսյան)

Նիստը բացեց գործարարության աջակցման խորհրդի /այսուհետև՝ խորհուրդ/ քարտուղար, «Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ Ռ. Հարությունյանը: Նա խորհրդի անդամներին ներկայացրեց նիստի հավաքի նպատակը, հակիրճ ներկայացրեց օրակարգային հարցերը և առաջարկեց իրականացնել բաց քննարկումներ աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ոլորտում կուտակված խնդիրները բացահայտելու և կարճ ժամկետում դրանց լուծման հնարավոր ուղիներ փնտրելու համար:

Ելույթ ունեցավ նաև «Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործարարության աջակցման հարցերի քարտուղարության /այսուհետև՝ քարտուղարություն/ պետ՝ Ժ. Արամյանը: Նա ներկայացրեց աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ոլորտում աշխատանքային օրենսգիրքը և այդ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը պրակտիկայում կիրառելու արդյունքում բիզնեսի զարգացման վրա ազդող ՀՀ կառավարության 26.06.08թ. «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 775-Ն որոշմամբ արդեն իսկ բացահայտված խնդիրները և խոչընդոտները: Նա նիստի մասնակիցներին տեղեկացրեց այս պահի դրությամբ վերը նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող քայլերի՝ մասնավորապես աշխատանքային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի նախապատրաստման մասին, որում մի շարք հարցեր իրենց լուծումն են ստանում: Սակայն նա մատնանշեց, որ այս ոլորտը համարվում է համեմատաբար քիչ ուսումնասիրված և, որ այստեղ, բացի վերը նշված խնդիրներից, առկա են իրական խոչընդոտներ աշխատուժի մրցունակության և բիզնեսի հետագա զարգացման համար: Առաջարկեց գործարարներին իրականացնել մանրամասն քննարկումներ, որի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն խորհրդի քննարկմանը և ՀՀ կառավարություն:

Քննարկումների ընթացքում նիստի մասնակիցների կողմից արվեցին մի շարք առաջարկություններ, մասնավորապես՝

- Հարկային մարմինների կողմից ճնշումներ են գործադրվում ընկերությունների նկատմամբ՝ պահանջելով հաշվետվություններում բարձր ցույց տալ ընկերությունում փաստացի գործող միջին աշխատավարձի մակարդակի ցուցանիշները՝ նպատակ հետապնդելով բարձրացնել ընկերությունների կողմից վճարվող սոցիալական վճարների ծավալները: **Առաջարկվում է** խնդիրը բարձրացնել հարկային մարմինների առջև՝ նման վարչարարական ոճը դադարեցնելու համար: *(«Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՄՊԸ)*
- Տնտեսվարող սուբյեկտների ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված մի շարք նորմեր չպահպանելու հետևանքով ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգրքով

նախատեսված տուգանքների չափերը հաշվի չեն առնում այդ խախտումը թույլ տված ձեռնարկությունների չափերը և ֆինանսական հնարավորությունները (օրինակ՝ փոքր, միջին կամ խոշոր ընկերություններ) և շատ հաճախ դրանք ծանրագույն բեռ են հանդիսանում փոքր ձեռնարկությունների համար, հատկապես խոսքը վերաբերվում է աշխատողների հետ կնքվող պայմանագրերում օրենսգրքով նախատեսված որոշ վիճարկելի պայմանները չներառելուն, աշխատանքային պայմանագրերի գրանցման գրանցամատյանների վարման և պահպանման կարգը խախտելուն ուղղված տուգանքների հավասար կիրառմանը: Բացի նրանից, որ աշխատանքային տեսչության կողմից անհարկի և խիստ վիճարկելի պահանջներ են դրվում աշխատանքային օրենսգրքի որոշ դրույթներ աշխատանքային պայմանագրերում ներառելու համար, որը հիմք է տալիս հարկային մարմինների կողմից հաճախ վիճարկելի տուգանքներ կիրառել փոքր ձեռնարկությունների նկատմամբ, ***առաջարկվում է*** օրենսգրքում տարբերակված մոտեցում ցուցաբերել նախատեսված տուգանքների չափերի հետ կապված, ինչպես նաև էապես պարզեցնել աշխատանքային պայմանագրերում պահանջվող պարտադիր պայմանների ներառման գործընթացը: ***(«Հայաստանի վաճառականներ» ՀԿ)***

- Սոցիալական վճարների կիրառվող դրույքաչափերի սանդղակը անհավասար դաշտ է ստեղծում հատկապես փոքր ձեռնարկությունների համար և դրանից ելնելով փոքր ընկերությունները հարաբերականորեն ավելի բարձր սոցիալական հարկի տոկոսադրույթներ են վճարում: ***Առաջարկվում է*** վերանայել գործող դրույքաչափերը և ճիշտ համամասնություն սահմանել ցածր և բարձր աշխատավարձերի սոցիալական վճարների նկատմամբ: ***(«Հայաստանի վաճառականներ» ՀԿ)***
- Աշխատանքային օրենսգրքով փորձաշրջանի համար սահմանված առավելագույն ժամկետը 3 ամիս է, սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանը շատ հաճախ բավարար չի լինում բացահայտելու տվյալ աշխատատեղին աշխատողի համապատասխանությունը: ***Առաջարկվում է*** երկարեցնել փորձաշրջանի առավելագույն ժամկետը՝ սահմանել 6 ամիս: ***(«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)***
- Փորձաշրջանի ընթացքում շատ հաճախ աշխատողներին տվյալ աշխատատեղին համապատասխան ուսուցանելու և փորձ ձեռք բերելու նպատակով ընկերությունները կատարում են լրացուցիչ զգալի ծախսեր, մասնավորապես՝ բանկային համակարգում, տեքստիլ արդյունաբերությունում, ոսկերչության բնագավառում և այլն փորձաշրջանում գտնվող անձանց պատրաստման, ուսուցման և վերաորակավորման համար իրականացվում են զգալի լրացուցիչ ծախսեր, որոնք ազդում են ձեռնարկության ցուցանիշների ու մրցունակության վրա, ինչպես նաև բարձրացնում են արտադրանքի և

ծառայությունների ինքնարժեքը: **Առաջարկվում է** ընկերությունների կողմից իրենց աշխատակիցների պատրաստման, ուսուցման և վերաորակավորման ծախսերն ամբողջովին փոխհատուցել կամ սահմանել որոշակի սահման իրականացվող ծախսերը ընկերության սոցիալական վճարների հաշվին կատարելու վերաբերյալ: **(«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ, «Շրևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ)**

- Փոխադարձ համաձայնությամբ չվճարվող արձակուրդում գտնվող աշխատակիցների համար հարկային մարմինների կողմից նվազագույն սոցիալական վճարների վճարման չհիմնավորված պահանջի ներկայացումը (որը չի բխում օրենսդրությունից, քանի որ տվյալ ժամանակաշրջանում չկա պարտադիր սոցիալական վճարների հաշվառման օբյեկտ) հսկայական բարդություններ է ստեղծում ընկերությունների համար՝ չունենալով եկամուտներ և ստիպված լինելով կրճատել աշխատակիցներին, աշխատողների հետ կատարել վերջնահաշվարկներ, չնայած աշխատողների համաձայնությանը գտնվել չվճարվող արձակուրդում՝ հետագայում պատվերների առկայության դեպքում նորից աշխատանքի անցնելու պայմանով: **Առաջարկվում է** օրենսդրության մեջ հստակ ամրագրել, որ գործատուի և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ չվճարվող արձակուրդում գտնվող աշխատակիցների համար սոցիալական վճարներ չեն հաշվարկվում և չեն վճարվում: **(«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)**
- **Առաջարկվում է** վերացնել աշխատանքային օրենսգրքով աշխատանքային պայմանագրերի պարտադիր կնքման պահանջը՝ այդ հնարավորությունը թողնելու գործատու և աշխատող փոխհամաձայնությանը, և այդ փոփոխությունների իրականացման դեպքում աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարել նաև բոլոր համապատասխան հոդվածներում: **(«Ամերիա» ՓԲԸ)**
- **Առաջարկվում է** հնարավորինս պարզեցնել ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքի թույլտվության ընթացակարգերը և ժամանակային սահմանափակումները՝ համապատասխան փոփոխություններ կատարելով «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում: **(«Ամերիա» ՓԲԸ)**
- Աշխատանքային օրենսգրքը սահմանում է վճարվող արձակուրդի մի շարք տեսակներ, որոնք էապես սահմանափակում են գործատուի և կիրառվող աշխատուժի մրցունակությունը: **Առաջարկվում է** ուսումնասիրել տարբեր երկրների, մասնավորապես՝ արևելյան Եվրոպայի երկրների փորձը արձակուրդի տեսակների, տրամադրման ժամկետների վարձատրման չափերի վերաբերյալ և այն կիրառել ՀՀ-ում: **(«Ամերիա» ՓԲԸ)**

- **Առաջարկվում է** վերանայել 28 պարտադիր օրացուցային օր ամենամյա արձակուրդի նորմը, սահմանել նվազագույն շեմը (օրինակ՝ 14 աշխատանքային օր), իսկ դրանից ավելի դեպքում խնդիրը կարգավորել կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով: **(«Ամերիա» ՓԲԸ)**
- **Առաջարկվում է** վերանայել հանգստյան, տոն օրերի և արտաժամյա աշխատանքների համար սահմանված հավելավճարների չափերը՝ այդ հարաբերությունների կարգավորումը թողնելով գործատու աշխատող կողմերի պայմանավորվածությանը, ինչը էապես նպաստում է սովերային հարաբերությունների զարգացմանը: **(«Ամերիա» ՓԲԸ)**
- «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ՀՀ կառավարության 11.12.03թ. N 1907-Ն որոշմամբ սահմանվել է առողջության համար վնասակար աշխատանքների և մասնագիտությունների ու առողջության համար առանձնապես վնասակար, առանձնապես ծանր աշխատանքների և մասնագիտությունների ցանկը, որի հիմքում, ըստ էության, դրվել է սովետական միությունում գործող նորմատիվային դաշտը և, որն առնչություն չունի և չի համապատասխանում Հայաստանի տնտեսության ճյուղերի ներկա վիճակի, կիրառվող տեխնիկայի և տեխնոլոգիայի առաջընթացի հետ: Հարկային մարմինների կողմից հիմք ընդունելով վերոհիշյալ նորմատիվ դաշտը և աշխատանքային օրենսդրության վարչական իրավախախտումների պահանջները՝ իրականացվող ստուգումները և կիրառվող տույժերն ու տուգանքները էական խոչընդոտներ են ստեղծում ընկերությունների համար և ստեղծում են կոռուպցիայի անսահմանափակ դաշտ: **Առաջարկվում է** արմատապես վերանայել աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների դեպքում աշխատանքի վարձատրության հայեցակարգը, ինչպես նաև առողջության համար վնասակար և առանձնապես վնասակար մասնագիտությունների ցանկը համապատասխանեցնել Հայաստանի տնտեսության ճյուղերի պահանջներին և արդի վիճակին: Նույն խնդիրն առկա է նաև ՀՀ կառավարության 11.08.05թ. N 1599-Ն որոշմամբ սահմանված երկարացված՝ մինչև 35 օր տևողությամբ (բացառիկ դեպքերում՝ մինչև 48 օր տևողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկի պրակտիկայում կիրառմանը, քանի որ ներդրվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, սարքավորումներ և տվյալ ցանկն էապես չի համապատասխանում ռեալ իրավիճակին, անհարկի խոչընդոտներ է ստեղծում գործատու և աշխատող հարաբերություններում և ավելացնում է գործատուի ծախսը: Առաջարկվում է վերանայել վերոհիշյալ ցանկը: **(«Ամերիա» ՓԲԸ, «Բիո-քիմ» ՍՊԸ, «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ)**

- Դեռևս օրենսդրությամբ կարգավորված չէ նաև տնտեսության տարբեր ճյուղերում ըստ մասնագիտությունների և ոլորտների տարեկան պարտադիր բուժական ստուգման իրականացման կարգը, մասնագիտությունների ցանկը, գործընթացը կարգավորող լիազոր մարմինը, բուժական զննման անցկացման ծախսերի աղբյուրը, տվյալ գործընթացում գործատու - աշխատող հարաբերությունները, որի պատճառով լայն դաշտ է ստեղծվում կոռուպցիայի համար: **Առաջարկվում է** օրենսդրությամբ կարգավորել վերոհիշյալ ոլորտը: **(«Բիո-քիմ» ՍՊԸ, «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)**
- Նիստի մասնակիցների կողմից առաջարկություններ արվեցին վերանայել ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված արտաժամյա, ոչ աշխատանքային և հանգստյան օրերի, գիշերային ժամանակի կիրառման սահմանափակումները, որոնք բիզնեսի տարբեր ոլորտներում աշխատանքային առանձնահատկություններից ելնելով անհարկի խոչընդոտներ են ստեղծում և այդ հարաբերությունների կարգավորումը թողնելով գործատու - աշխատող կողմերի պայմանավորվածությանը: **(«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ, «Բիո-քիմ» ՍՊԸ)**
- Մի շարք ընկերությունների ներկայացուցիչներ իրենց առաջարկությունները քննարկման ընթացքում ներկայացրեցին գրավոր տեսքով, և պայմանավորվածություն ձեռք բերվեց այդ առաջարկությունները, ինչպես նաև արձանագրության մեջ արտացոլված առաջարկությունները նույնպես զետեղել քարտուղարության կողմից նախապատրաստվող ամփոփաթերթիկում և կցել արձանագրությանը: **(«Էլեկտրասարք» ԲԲԸ, «Հայաստանի Բանկերի Միություն» ԻԱՄ, «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ, «Էրբունի Բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)**
- Բազմաթիվ ընկերությունների ներկայացուցիչներ մատնանշեցին սոցիալական վճարների համար պահանջվող մեծածավալ և հաճախ կրկնվող, հատկապես՝ աշխատողների տվյալների մասով, հաշվետվությունների ներկայացման պահանջը, ինչը էապես բարդեցնում է ընկերությունների, հատկապես՝ փոքր ընկերությունների, աշխատանքը և ստեղծում է կոռուպցիոն ռիսկեր: **Առաջարկվում է** էապես պարզեցնել հաշվետվությունների ներկայացման ժամկետները և պահանջվող տեղեկատվության ծավալները, բացառել անհարկի կրկնությունները: **(«Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ, «Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ, «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ, «Բիո-քիմ» ՍՊԸ, «Հայաստանի վաճառականներ» ՀԿ, «Ամերիա» ՓԲԸ)**

2. Գործարար միջավայրի այլ ոլորտներում ստեղծված իրավիճակում հրատապ լուծում պահանջվող խնդիրների բացահայտում և քննարկում:

(Ռ. Հարությունյան, Ժ. Արամյան, Ց. Գևորգյան, Է. Գրիգորյան, Լ. Հարությունյան)

Նիստի մասնակիցների կողմից բարձրացվեցին հարցեր, որոնք մեծամասամբ վերաբերում էին պրակտիկայում կիրառվող հարկային վարչարարությանը և իրենց բնույթով զգալի խոչընդոտներ են ստեղծում հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների կենսունակության պահմանման և զարգացման համար: Մասնավորապես`

- Հաստատագրված վճարներից պարզեցված հարկային համակարգի անցնելու հետ կապված լուրջ խնդիրներ են ստեղծվել հատկապես հեռավոր մարզերում գործող առևտրի և ծառայությունների ոլորտում գործող փոքր ձեռնարկությունների համար: Բանը նրանումն է, որ գործարարները լուրջ խնդիրներ ունեն հանրապետության խոշոր մատակարարների մարզերում նրանց իրացման միջնորդներից ապրանքների համար փաստաթղթեր (հաշիվ ապրանքագրեր) ստանալու գործում: ***(«Հայաստանի վաճառականներ» ՀԿ)***
- ՀԴՄ-ների տեղադրման գործընթացը հատուկ խնդիրներ է ստեղծել հատկապես գյուղական վայրերում, քանի որ գաղտնիք չէ, որ գյուղական շրջաններում լայն տարածում է ստացել «ապառիկ» եղանակով իրականացվող առևտուրը: Տվյալ մեթոդով առևտուրն իրականացնելու և ՀԴՄ-ների կիրառումը օրենսդրությամբ չկարգավորելու պատճառով լուրջ հիմքեր են ստեղծվում հարկային վարչարարության և հարկային ոլորտի աշխատողների կողմից չարաշահումների համար: ***Առաջարկվում է*** նորմատիվ ակտերով կարգավորել այդ ռեալ իրողությունը: ***(«Հայաստանի վաճառականներ» ՀԿ)***
- Ապրանքների առաքման գրքում հաշիվ-ապրանքագրերի ապրանքների լրիվ տեսականին նույնությամբ արտացոլելու չպատճառաբանված պահանջը, հատկապես այն ընկերություններում, որոնք իրացնում են ապրանքների լայն տեսականի` էական վարչարարական խոչընդոտ է ստեղծում և ընկերությանը պահանջում է լրացուցիչ աշխատողներ վարձել: ***Առաջարկվում է*** էապես պարզեցնել ապրանքների առաքման գրքերի վարմանը ներկայացվող պահանջները` հաշվի առնելով, որ հաշիվ-ապրանքագրերն արդեն իսկ կազմվում և դուրս են գրվում համակարգիչներով: ***(«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)***

- Բիզնեսի որոշ ոլորտներում, կախված ապրանքի սեզոնայնությունից, պահպանման ժամկետներից և այլ բազմաթիվ գործոններից, կիրառվում է գնորդի կողմից մատակարարին ապրանքի ետ վերադարձման մեխանիզմը: Օրինակ՝ տեքստիլ ձեռնարկությունը ետ է ընդունում ամառային սեզոնի հագուստի վաճառքից մնացած ապրանքները, սակայն ստիպված է լինում այն ընդունել ավելացված արժեքի հարկով ներառված գնով և ուղղակիորեն կրում է վնասներ: ***Առաջարկվում է*** օրենսդրությամբ կարգավորել վաճառված ապրանքից մատակարարին նույն ապրանքի մնացորդի վերադարձման պրակտիկայի հարկման և հարկային վարչարարության մեխանիզմները՝ նպատակ ունենալով ստեղծել տնտեսվարման ճկուն մեխանիզմներ: ***(«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)***
- Ստեղծված ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում մատակարարները լուրջ վնասներ են կրում ապրանքների դիմաց համատարած խորացող չվճարումների հետևանքով: Առաջարկվում է վերանայել օրենսդրությունը՝ գոնե որոշակի ժամկետով իրացումը հաշվարկել ոչ թե հաշվեգրման մեթոդով, այլ վճարման փաստով, և ժամանակավորապես հրաժարվել չվճարումների հետևանքով ծանր ֆինանսական վիճակում գտնվող ընկերությունների հարկային պարտավորությունների դիմաց բանկային հաշիվներին կալանք դնելու պրակտիկայից: ***(«Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ)***
- ՀԴՄ-ների ներդրման գործընթացն ամբողջ ծավալով ապահովելու նպատակով ***առաջարկվում է*** օրենսդրությամբ ներդնել ՀԴՄ կիրառողների խրախուսման և փոխհատուցման համակարգ, մասնավորապես դրանցից մեկը կարող է լինել որոշակի շեմի չափով գործարարի եկամտահարկի նվազեցումը: ***(«Ամերիա» ՓԲԸ)***

Մասնակիցների կողմից արվեցին նաև հարկային վարչարարության կատարելագործման մի շարք այլ առաջարկություններ, որոնք ներառված են սույն արձանագրությանը կից ամփոփաթերթիկում:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ անհրաժեշտ է ապահովել գործարար միջավայրից ստացվող առաջարկությունների լուծման հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, պահպանել ետադարձ կապի սկզբունքը: Որոշվեց «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի կայք էջում պարբերաբար զետեղել ինչպես վերոհիշյալ, այնպես էլ ապագայում բարձրացված խնդիրների ցանկը, հետագայում նաև պետական մարմիններում և խորհրդում դրանց քննարկման և լուծման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի
Գլխավոր տնօրեն,
Խորհրդի քարտուղար՝
Հարությունյան

Ռ.

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի
Գործարարության աջակցման հարցերի
քարտուղարության պետ՝

Ժ. Արամյան